

յերուսաղէմ եւ օրհնեցին (գրեթէ Պարոնտէրն) Լալիսկոպոս» :

Կ'ըսուի նաեւ «Պատմութիւն եւ Վարք Պարոնտէրի» գրութեան մէջ<sup>7</sup> . «Եւ յորժամ տեսին ազգս Հայոց զհաւատարիմ ծառայութիւն նորա, որ վասն սուրբ Երուսաղէմայ, ապա ի ՌԿԲ թուին հարկ ի վերայ եղին եւ կոչեցին զառաքինի Աւետիս կաթողիկոսն սուրբ էջմիածնայ, եւ բազում վարդապետք ընդ նմա եւ ետուն զնա ձեռնադրել եւ օրհնել արքեպիսկոպոս սուրբ Երուսաղէմայ» :

Աւետիս կաթողիկոսի Երուսաղէմ գլխաւորութեամբ միջոցին իրեն պատահած էր հոն Մովսէս վարդապետ, որ յետոյ կաթողիկոսացաւ : Իւր առ Գրեթոր Կեսարացի գրած թղթին մէջ (19 Սեպտ. 1615) ակնարկուածին մ'ընելով այս մասին կը գրէր . «Այժմ Դաւիթն ալ գնացաւ է ի Սպահան եւ Աւետիսն կայ ի էջմիածին եւ ասվիս զգեցեալ, ի մեզ սիրելութեան թուղթ է առաքեալ . որ մեր յերուսաղէմայ գալն փոքր ի շատէ աստուածավարութիւն տեսաք ի նմա : Բայց Ասլանէ լսեցաք թէ ի հրամանոց կողմանէ թուղթ է եղեր առաքեր ի Կ. Պոլիս», այսինքն առ Գրեթոր Կեսարացի ի Կ. Պոլիս թուղթ գրած է :

Երբ կը վերադառնար Աւետիս էջմիածին, ճանապարհին (յԱմիլ) կ'իջնայ իր ձեռքը Մելքիսեդեկ կաթողիկոսի առ Ուրբանոս Ը. գրած թղթին տպագիր մէկ օրինակը, զոր Հոռոմ տպագրած էին . «Այս գրոյս մէկն ի Համիթ է եկեր . եւ զնորա մէկ օրինակն Աւետիս կաթողիկոսն է տարեր ի հետն . եւ զմի օրինակն Համիթեցիքս մեզ էին յղրկել» կը գրէ Գրեթոր Կեսարացի առ Մելքիսեդեկ մեղադրական նամակին մէջ<sup>8</sup> :

6. Աւետիս կաթողիկոսէն ունինք ինքնագիր յիշատակարան մ'ալ էջմիածնի Թ. 427 Գանձարանին մէջ : Գանձարանը գրուած է ձեռամբ «Յովհաննէս իրեցի» ՌԿԶ (1617) թուին «ի հայրապետութեանն տեսն տէր Աւետիս կաթողիկոսին եւ Վաղարշապատ սուրբ էջմիածնին . եւ ի թագաւորութեանն Բագրատ Իմիրզին, որ բազում տեղիք էառ եւ տիրեաց զերկիր . եւ արար խաղաղութիւն ոչ սակաւ . բայց հարկայպահանջութիւն բուռն եւ ծանր էր ի վերայ քրիստոնէից» : Այս ձեռագիրը նորոգել կու տայ Աւետիս կաթողիկոս

7 Չեռ. Ս. Յակոբեանց Մատենադարանի Թ. 322, էջ 71—72. հմտ. Գալէմբեարեան՝ Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւն : Վիեննա 1915, էջ 48. Աղաւնուհի, Միարանք, էջ 41 :  
8 Թորոս Աղբար, Բ., 288 :

եւ հետեւեալ արձանագրութիւնը իր անուան յիշատակ կը թողու . «Ես տէր Աւետիս կաթողիկոս այս Գանձարանս զնեցի հալալ արդեանց իմոց . եւ նորոգել ավի յիշատակ ինձ եւ ծնաւորաց իմոց՝ Միրզին եւ մաւրն Գաւար Սուլթանին . եւ եղբաւրն իմ Կիրակոսին եւ որդոյն տէր Թումանին . եւ եղաք ի դուռն սուրբ էջմիածնայ» :

Վերջին անգամ կը յիշուի Աւետիս կաթողիկոս 1622ին : Գրեթոր Գարանաղցի իւր Աստուածաշունչի օրինակութիւնը կ'աւարտէ «ի մեծ թուականիս Հայոց Ռ. եւ Հ. եւ Ա., Նոյեմբեր ամսոյ է. եւ Քաղոց Թ. Թամուզ Ը. եւ գրեցաւ ի հայրապետութիւն Հայոց տեսն տէր Աւետիսին, որ այժմ յաջորդէ զաթոս Ս. Գրեթորի Լուսաւորչին մերոյ»<sup>9</sup> :

Հիմնուած այս տողերու վրայ Գարանաղցուց վերը յառաջ բերուած տեղիքը՝ «եւ անտի (էջմիածնայ գնաց) ի Վրաց տունն եւ անդ եղեւ վախճան նորա, որ էր թվին ՌԿԹ» (1620) պէտք է այնպէս հասկնալ թէ Աւետիք 1620ին անցաւ Վրաստան եւ հոն վախճանեցաւ 1623էն ետքը :

7. Նիւթերու այս համադրութենէն կը տեսնուի, թէ Աւետիս կաթողիկոս ընդ էջմիածնեցի էր, որդի Միրզայի եւ Գոհար Սուլթանի . ունէր երկու եղբայրներ՝ Կիրակոս եւ Սահակ, վերջինս մանուկ հասակին վախճանած (1601էն յառաջ), եւ քոյրեր՝ Նիխամբեթ եւ Շաղվարդ : Կը յիշէ եղբորորդի մ'ալ, անշուշտ Կիրակոսի զաւակը, Թարխան անուն, որ 1601ին «նորաբողոք» էր . 1617ին անիկա «տէր Թումայ» անուամբ կը ներկայանայ . հաւանորէն նոյն տէր Թուման է, որ 1626ին «Մարտիրոս արքեպիսկոպոս էջմիածնեցի, եղբորորդի տէր Աւետիս կաթողիկոսի»<sup>10</sup> անունը եւ տիտղոսը կը կրէ :

Աւետիս իւր բնակութիւնն ունէր էջմիածին : Ընտրուած է կաթողիկոսակից հաւանորէն 1594ին, Առաքել կաթողիկոսի մահէն ետքը : 1601ին ուղեւորեցաւ Կ. Պոլիս եւ վերադարձաւ էջմիածին . հոս էր 1603ին : Ուր էր արարատեան դաշտի բնակիչներու տեղահանութեան ժամանակ, չգիտենք : Երեւան էր

<sup>9</sup> Ժամանակագրութիւն, էջ 612 :  
<sup>10</sup> Մարտիրոս արքեպիսկոպոս 1626ին ընկերացած էր Մելքիսեդեկ կաթողիկոսին, երբ անիկա արտասահման կը փախչէր . նոյն տարւոյն Գեկտ. 29ին Մելքիսեդեկի կոնդակին մէջ կը յիշուի ինքը իբրեւ վկայ Նիկոզայոս արքեպիսկոպոսի ձեռնադրութեան ի Լվով . կոնդակին լատիներէն թարգմանութեան մէջ կ'ըսուի Rev. Martinus metropolitanus archiepiscopus Sanctae Ecimiazin, nepos Revissimi Avedic Patriarchae .

1605ին : 1613ին հրաւիրուեցաւ Երուսաղէմ ձեռնադրելու Գրեթոր Գանձակեցին Երուսաղէմի արքեպիսկոպոս . ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Ապրիլ 5ին : Մովսէս վարդապետ զինքը էջմիածին գիտէ 1615ին : Հաւանորէն քաղաքական եւ տնտեսական դժուարին պայմաններէն խոյս տալով 1620ին առանձնացաւ Վրաստան եւ հոն ալ վախճանեցաւ 1622էն ոչ շատ ետքը (1623°) :

Ժամանակակիցները միաբան կը վկայեն Աւետիսի պարկեշտ վարքին մասին . իւր բարութեամբը, մեղմ բնաւորութեամբը Մելքիսեդեկ կաթողիկոսի հակապատկերն էր : Ունէր որոշ չափով մտաւոր զարգացում . ընթերցասէր էր եւ գրասէր, ինչպէս իր օրինակած գրքերը ցոյց կու տան եւ կը վկայեն Գրեթոր Գարանաղցի եւ Մովսէս վարդապետ : Ժողովուրդը կը սիրէր զինքը եւ Ամիրզունախան կը յարգէր իր անձը : Բայց չունէր վարչական կարողութիւն, դժուարին պայմաններու մէջ ժողովրդեան առաջնորդելու ոյժը : Անփառասէր էր, այս պատճառաւ չունեցաւ բախում ոչ Դաւիթ եւ ոչ Մելքիսեդեկ կաթողիկոսներու հետ . քաղաքական իշխանութիւնն ալ չհալածեց զինքը : Թերեւս այս չեզոք զիրքին համար ալ չարժանացաւ Առաքել Դաւրիթեցուց ուշադրութեան :

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



**ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՓԱՅԻ**  
**ԱՌԵՋՆՈՐԳ Ս. ԱՆՏՈՆԻ ՎԵՆԵՑ Ի ԿԱՓԱ**  
**ԵՒ ԵՐԵՍՓՈՒՆԵ ԿՈՍՏԱՆԳՒՆ ԿԵԹՈՂԻԿՈՍԻ**  
**(1428—1448)**

Սարգիս վարդապետի անունը ծանօթ է Փլորենտեան ժողովի պատմութենէն : Իր կեանքի եւ գործունէութեան մասին անդրադոյն տեղեկութիւններ հաղորդած են 1428—1438 տարիներու մէջ ի Կաֆա գրուած ձեռագրական յիշատակարանները : Ինձ կը թուի թէ ձեռք բերուած այս տեղեկութիւններու վրայ յեցած կարող ենք իրեն վերագրել Քաջ Լիպարիտ իշխանի յիշատակին նուիրուած տաղ մը, որ հրապարակի վրայ անանուն կը շրջի :

1. Սարգիս վարդապետի կեանքը մինչեւ

1428 անյայտութեան մէջ թաղուած է : Առաջին անգամ կը յիշէ զինքը Քրիստոստուր աբեղայ 1428ին Աւետիք արեղայի խնդրանքով գրած Սաղտեորի յիշատակարանին մէջ, որ պահուած է Պարիսի Աղգային Մատենադարանի մէջ, Թ. 81 : Այս տեղ կը յայտնէ գրիչը, թէ օրինակութիւնը կատարուած է «ի յաշխարհս Հոնաց, ի մայրաքաղաքս ի Կաֆաս ընդ հովանեաւ ի յառ ոտն սրբոյն Անտոնի անպատականին . եւ յեպիսկոպոսութեան Տէր Յովսէփու Գաղատացոյ . եւ ի վարդապետութեան Սարգիս վարդապետի որ է առաջնորդ սուրբ ուխտիս եւ ուսուցիչ մեր» :

Նոյն միտքը կրկնուած է նոյն գրչի 1429ին Մարտիրոս արեղայի համար գրած Շարակնոցին մէջ, ի գլուխ ելած «յաշխարհս Հոնաց, ի վանս որ յանուն Ս. Անտոնի, առնթեր Կաֆի մեծ քաղաքին, առաջնորդութեամբ վանացս մեծի վարդապետի եւ քաջ բարունոյ տեսն Սարգիս . . .» (Պարիս, Աղգ. Մատ., Թ. 69) :

Ո՞ր քաղաքէն եւ ե՞րբ եկաւ Սարգիս Ղրիմ եւ հաստատեց բնակութիւնը «առնթեր Կաֆայի» գտնուած Ս. Անտոն վանքին մէջ . դժբախտաբար լուծ են այս մասին ժամանակակիցները :

Կաֆայի Պատմութեան մէջ առաջին անգամ այս թուին կը պատահինք նաեւ Ս. Անտոն անապատականի անուամբ կառուցուած վանքին, որուն համար կ'ըսուի թէ հինաւուրց վանք եղած ըլլայ եւ ապա «աւեր եւ ամայացեալ» վիճակի մատնուած . այնպէս որ «մուրալով էին կերակուր բնակչաց սորա» :

Սարգիս վարդապետ եկած է Կաֆա հաւանորէն իբրեւ երեսփոխան Սոյ կաթողիկոսին, ինչպէս իրեն տրուած «աթոռակալ» տիտղոսէն կ'իմացուի եւ 1438ին յայտնապէս կը հաստատէ զայս Կոստանդին կաթողիկոս : Սկսեալ 1348էն կար ի Ղրիմ «հիւսիսային կողմանց» արքեպիսկոպոսին առնթեր աթոռակալ մը, յանունէ Յովհաննէս Սեբաստացի (1348—1485), որ կ'երեւայ թէ նոյնպէս կաթողիկոսական ներկայացուցիչ էր Գենուացուց քով : Անոր մահունէն ետքը մինչեւ 1428 աթոռակալ չի յիշուիր . կամ անհոգութեամբ յիշատակագիրներու, որոնց թիւը շատ նուազ է այս 40ամեայ շրջանին, եւ կամ Կաթողիկոսարանի կողմէն նոյնպիսի մէկը նշանակուած չըլլալուն համար :

Սրբ հաստատուելով Կաֆա՝ իր գործունէութեան համար բնակավայր կ'ընտրէ Սար-



գլխ քաղքին մերձակայ «ամայացեալ եւ աւեր» վանքն Ս. Անտոնի, զոր կը նորոգէ, կը լրացնէ նոր յաւելուածներով եւ «պայծառ ժամատեղեալ», կ'ապահովէ վանքին եկամուտը, կը հաւաքէ նոր միաբաններ՝ «զարգարեաց եղբարք», եւ կը հիմնէ դասարան եւ անձամբ կ'ուսուցանէ: Այս մասին կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէ Թաղէոս Ավրամեաց, որ Սարգիս վարդապետի աշակերտներու թուին մէջ կը գտնուէր. կը գրէ 1430ին օրինակած Հարանց վարքին մէջ. «Աւարտ սորա եղև ի թուին ՊՉԹ. յաշխարհս Հոնաց եւ Գաղարկայ կոչեցելոյ, յերկիրն Սուլթաթայ, ի մայրաքաղաքս Կաֆայիս, (ի) մենաստանիս որ յանուն մեծի ճգնաւորին սրբոյն Անտոնի, եւ ընդ հովանեալ նորին արժանաւոր պրօթիցն, եւ յառաջնորդութեան սորին վանից՝ մեծի երջանիկ բարունապետի Սարգիս լուսաւոր վարդապետի արթուն եւ ժիր մշակի. որ զաւերս զայս եւ զամայացեալս՝ որ մուրալով էին կերակուր բնակչաց սորա՝ նորոգեաց շինելով եւ յօրինեաց զբոլոր պակասութիւն սորա. եւ զարգարեաց եղբարք եւ պայծառ ժամատեղաւ եւ հաստատեաց մտօք եւ արդեամբք. զոր ընդ երկայն աւուրս արասցէ Տէր Աստուած զսա բազմամեայ ժամանակօք տեւել մնալ առ մեզ: Իսկ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ աստուածասէր եւ իմաստուն խաղաղասիրի. եւ (ի) նուիրակութեան եւ եպիսկոպոսութեան տէր Կարապետի սրբանունը եւ խոհեմի: (Գրեցաւ) ձեռամբ պիտականուն կրօնաւորի Թաղէոսի Ավրամեաց»<sup>1</sup>:

Նոյն Թաղէոս արդէն 1428, Նոյեմբերին կը ծանուցանէր, թէ «Սարգիս քաջ հոեատոր վարդապետն սկսանի դաս ասել տէր Թորոսի, տէր Սիմէոնի եւ Թաղէոս գրչիս»<sup>2</sup>. այս նպատակաւ ալ կ'օրինակէր Գիրգոր Տաթևացոյ Լուծմունքն Արտաքնոց (Չ. օր. Վենետիկ, Մխիթ. Մատ. ի):

1432ին Քրիստոստոսը գրիչ, որ Սարգսի աշակերտներէն կ'երեւայ, կ'օրինակէ երկրորդ Խաղաւոր մ'ալ Սարգիս սարկաւազի համար, «յաշխարհս Հոնաց, ի վանս որ յանուն սուրբ Անտոնի, որ առնթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի, առաջնորդութեամբ վանացս եւ արթունակութեանն մեծի վարդապետի քաջ բարունոյ տեառն Սարգսի. ի հայրապետու-

<sup>1</sup> Չ. Վ. Փրզալմեանց, Նօտարք, էջ 95:  
<sup>2</sup> Ինքը կ'երեւայ էջմիածնի, Գեորգեան Բաժնի թ. 509 Մաշտոցի գրիչ «Թաղէոս կրօնաւոր», զոր գրած է 1434ին, Կաֆա, Ս. Անտոն մենաստանին մէջ:

թեան տեառն Կոստանդնեա եւ Եպիսկոպոսութեանն տէր Կարապետի» (ընդ գծուածը յետոյ աւելցուած) (էջմ. 2387):

Նոյն գրչէն է նաեւ Վիեննայի Մխիթ. Մատենադարանի թ. 543, Ներսէս Ծնորհաւոյ Տաղաչափութիւնք (Յուցակ, էջ 1016), գրուած 1432ին «ի վանս որ յանուն սուրբ Անտոնի, որ առնթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի, ի ինդրոյ պարոն Շամշատինին», բայց զանց առնուած է Սարգիս վարդապետի յիշատակութիւնը:

Վերջին անգամ յիշատակուած կը գտնենք իր անունը 1437ին, երբ կը գրուի իրեն համար Տաթևացոյ Արտաքնոց Լուծմունքը (Բ. օրինակ Վենետիկի Մխիթարեանց Մատենադարանի). կ'ըսուի. «Չստացող գրոցս՝ զՍարգիս բարունապետն եւ զփցուն գրիչս Աւգսենոս սուտանուն արեղայ աղաչեմ յիշել»<sup>3</sup>:

Այսպէս 1428—1437 կը գտնենք զՍարգիս սուտեցչական արթուն վրայ ի Կաֆա:

Սարգիս վարդապետ 1438ին հրաման ընդունեցաւ Կոստանդին կաթողիկոսէն իբրեւ կաթողիկոսական երեսփոխան երթալ Փլորենտիա եւ մասնակցիլ նոյն քաղաքին մէջ գումարուելիք Տիեզերական Ժողովին: Առիթը այսպէս ներկայացաւ:

Եւզինիոս Դ. Քահանայապետ (1431—1447), որ գեղեցիկ խորհուրդն ունեցած էր Արեւելեան Եկեղեցիներու եւ Կաթողիկէ Եկեղեցոյ մէջ սուրբ Միութիւն մը հաստատել, 1433ին դիմած էր Յովհաննէս Պողոնատոս կայսեր (1425—1448) եւ Յովսէփ Բ. պատրիարքին (1416—1439), ինչպէս նաեւ Հայոց Կոստանդին կաթողիկոսին (1429—1439), հրաւիրելու զանոնք այս Միութեան: Քահանայապետին ձայնը գտած էր Արեւելեան Եկեղեցիներու մէջ նպաստաւոր արձագանք: 1438ին Կայսեր եւ Քահանայապետի միջեւ կայացած էր համաձայնութիւն, բանակցութիւնները ի Փլորենտիա գումարուելիք Տիեզերական Ժողովին մէջ վարել: Նոյն տարւոյն Յունիս 11ին ձանադարհ ելան քահանայապետական նուիրակները հրաւիրանաց թղթերով: Հայոց համար սահմանուած նուիրակը հասաւ Կաֆա (Թէոդոսիա ի Արիմ), ուր ձեռնվական հանրապետութեան հովանաւորութեան տակ

<sup>3</sup> Ս. Անտոն վանքին մէջ գրած է Աւգսենոս գրիչ ի ինդրոյ համալրակ եղբոր Եսայայ 1440ին Մաշտոց մը «առ ոսո Ս. Անտոնի առաջին հեղինակի» (Վիեննայի Մխիթ. Մատ. 987). եւ 1440—1446 տարիներուն Ժողովածոյ գիրք մը (Կերկայի թ. 43):

մեծաթիւ հայ զաղթականութիւն մը կ'ապրէր<sup>4</sup>:

Տեղւոյն ձեռնվացի հիւպատոսը Պաւղոս Իմպերիալէ արդէն նոյն տարւոյն Մայիս 12ին դրած էր Հայոց առաջ Կաֆայի կողմէ Տիեզերական Ժողովին ներկայացուցիչ մը ուղարկելու պէտքը:

Հայոց արքեպիսկոպոսն էր նոյն ժամանակ Մաղաքիա, որ նոր էր ձեռնադրուած. իր նախորդն էր Կարապետ Եպիսկոպոս, որ իբրեւ նուիրակ եկած էր Սիւսէն յօգուտ Աթոռին նուիրակութիւն ընելու, եւ ի դատարկութեան արթուն՝ 1430—1437 տարիներուն, մինչեւ Մաղաքիայի ընտրութիւնը, վարած էր հայ զաղթականութեան առաջնորդութիւնը: Կաթողիկոսական երեսփոխանն էր Սարգիս վարդապետ:

1438, Մայիս 12ին Հիւպատոսի սենեկին մէջ կայացած խորհրդակցական Ժողովին ներկայ էին Կաֆայի Հայոց արքեպիսկոպոսն Մաղաքիա եւ բազմաթիւ քահանաներ եւ վաճառականներ: Հիւպատոսին առաջարկն էր «առաքել ի Գենուա կամ առ ամենասուրբ տէրն մեր Քահանայապետ կամ առ Սիւսհոգոսն հրեշտակ մի, իբրեւ զեսպան նոցա յօգուտ ամենայն քրիստոնէից»: Հայերը ինդրած էին, որ Հիւպատոսը շնորհէր իրենց երեք ամսուան միջոց մը, որպէս զի կարենան ի Սիւս Կոստանդին կաթողիկոսին պատգամաւորութիւն մ'ուղարկել եւ անոր հաւանութիւնն առնել<sup>5</sup>: Քիչ յետոյ կը հասնի հոն Քահանայապետին նուիրակն իւր կցորդով: Պատգամաւորութիւնը առած Քահանայապետին հրաւիրագիրն եւ այլ թղթեր Կաֆայեցիներէն կը մեկնի Կ. Պոլիս: Հոս իրենց հետ կը միանայ տեղւոյն Հայոց Յովհաննէս Եպիսկոպոսը, իբրեւ պատգամաւորութեան գլուխ:

Կաթողիկոսը, որ տեղեակ էր Եւզինիոս Դ. ի խորհուրդներուն, առանց յապաղութեան կը նշանակէ իւր երեսփոխանները: Այսպէս կը գրէ ի Կաֆա յանուն Սարգիս վարդապետի<sup>6</sup>. «Կոստանդին ծառայ ծառայից Տեառն մերոյ

<sup>4</sup> Խնդրոցս մասին տե՛ս մանրամասնօրէն Չ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, էջ 80—90, եւ նոյնին լատիներէն խմբագրութիւնը, Historia, էջ 88—98: Չ. Գ. Գալմբեարեան, Հայնդ. Ա. մ. ս., 1911, էջ 456—469:  
<sup>5</sup> Այս Ժողովոյն արձանագրութեան լատիներէն պատճէնը տե՛ս Պալճեան, Historia, էջ 299—301. Հայերէնը թարգմանութիւնը, Պատմութիւն, էջ 336—338:  
<sup>6</sup> Հայերէնէ լատիներէն թարգմանած է 1438, Նոյեմբեր 13ին Փրա թովմաս Գոմիսիկեան. Պալճեան, Historia, էջ 96—98. Հայերէն նոր թարգմանութիւն ի Պալճեանէ՝ Պատմութիւն, էջ 87—90:

Յիսուսի Քրիստոսի, որդւոյ իմում (Սարգիս) վարդապետի, Ժողովրդեան եւ Կղերիկոսաց Հայոց ի Կաֆա:

Շնորհօքն Աստուծոյ կարգեալ կաթողիկոս Վաղարշապատու, գրեմ զթուղթս հոյակապ քաղաքիդ Կաֆայ, առաքեմ զօրհնութիւն իմ ամենայն Ժողովրդեան որ բնակեալք էք ի Կաֆա: Որդեակք իմ հաւատարիմք պարծանօք գրեմ Ձեզ. այսինքն է՝ որդւոյ իմում Սարգսի վարդապետի, որ նստիս յաթոռ անձին իմոյ ի Կաֆա, եւ արքեպիսկոպոսի որդւոյ իմում անդրանկի (Մաղաքիայ) եւ ամենայն քահանայից սրբոց՝ Ստեփանոսի, Մովսիսի եւ այլոց ամենեցուն եւ ազնուական քաղաքացեաց Կաֆայեցոց... զօրութեամբ Հոգւոյն սրբոյ գրեմ զթուղթս զայս եւ տամ ձեզ զօրհնութիւն եւ զողջոյն:...

Գիտասաջիք, որդեակք իմ սիրելիք, այս ինքն է որդի իմ Սարգիս վարդապետ եւ գուրք քահանայք եւ քաղաքացիքդ, ծանրուք զի եկն առ մեզ Յովհաննէս Եպիսկոպոս եւ մատոցց զթուղթ մեր ի Կաֆայ, հանդերձ թղթովք փոխանորդի մեծի Քահանայապետին, եւ Տեառն Հիւպատոսի. ընթերցաք եւ ուրախ եղաք ընդ գրեալսդ զմիութենէ ընդ Հոմայեցոց եկեղեցոյ: Չայս իբրեւ լուայ, շնորհս եւ գոհուութիւնս մատուցի Աստուծոյ. շնորհք Հոգւոյն սրբոյ են, զի սկիզբն եղև գործոյս այսորիկ: Պարտ եւ պատշաճ է քրիստոնիէց ի միութեան եւ ի միաբանութեան կեալ: Ես իմով լի եւ կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգսի վարդապետի, որ է եւ եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին եւ Մարկոս եւ Թովմաս վարդապետաց եւ Յովակիմայ Եպիսկոպոսի Պերայ (Pera)<sup>7</sup>, զի երթիցն ի Ժողովն եւ լուսատու լիցի նոցա Հոգին սուրբ. եւ զօրութեամբ սրբոյ Հոգւոյն՝ զոր օրինակ միաբան եղեն Ս. Սեղբեստրոս եւ Ս. Գրիգորիոս, այսպէս միաբանեցէ զձեզ Աստուած ի խաղաղութիւն, ի սէր եւ ի միութիւն. եւ որպէս ինքնակալքն Կոստանդինոսս եւ Տրդատ միաբանք եւ զաշնակիցք ընդ միմեանս եղեն, լստ նմին օրինակի եւ գուր միւսանգամ հաստատեսաջիք զգործս նոցա ի միութիւն. եւ մեր

<sup>7</sup> Պալճեան, իրեն հետեւելով Գալմբեարեան լատիներէն ընդգրկելով Pera կ'իմանան եւ կը հայացնեն «Բերիս»: Հաւանօրէն Յովակիմ Եպիսկոպոս իբրեւ յաջորդ Յովհաննէս Եպիսկոպոսի օծուած եւ ուղարկուած էր Կ. Պոլիս: Ինքն ըլլայ թերեւս այն Յովակիմ Եպիսկոպոսը, որ 1461—1478, Պոլսոյ առումէն ետք Մեհմէտ Բ. կը Հայոց առաջնորդ ձանչցուցաւ: Յովակիմ Եպիսկոպոս ներկայ չեղաւ Փլորենտեան Ժողովին. հաւանօրէն մնաց Կ. Պոլիս:

միտադոյնք եմք ի դործս ինքնակալացս այսոցիկ. եւ այժմ որպէս եւ զիարդ լուսաւորեցէ սուրբ Հոգի զսուրբ Սիւնհոգոսն, այնմ պատրաստ եմք հնազանդել:

Գրեցաւ ի ԻՅ ամսեան Յուլեայ, յամի Տեառն ՌՆԼԸ (1438):»

Կաթողիկոսին թուղթը Կաֆա հասաւ Նոյեմբերի սկիզբները: Սարգիս Վ. եւ Ծր. Թովմա մեկնեցան անմիջապէս դէպի Կ. Պոլիս միանալու կայսերական չուրի: Բայց կայսրն արդէն ճանապարհ ելած էր, երբ անոնք Կ. Պոլիս հասան: Ստիպուած ընդ ծով եւ ընդ ցամաք յառաջ տանիլ ճանապարհը, 1439, Յուլիս 6ին հասան Փլորենտիա, երբ կայսրը՝ կնքած միաբանութիւնը Հռովմայ եկեղեցւոյ հետ՝ կը պատրաստուէր վերադարձի: Թէպէտ վաճակուած էր ժողովը, բայց ժողովական հարք տակաւին չէին ցրուած: Եւզինիոս Գ. անմիջապէս մասնաժողով մը նշանակեց, որ պիտի զբաղէր Հայոց եւ Հռովմայ եկեղեցւոյ միութեան հարցով: Հայ պատգամաւորները ծանօթացան ժողովոյն հաւատոյ եւ բարեկարգութեան մասին տուած վճիռներուն. ընդունեցան նաեւ այն չորս կէտերը, որոնց շուրջը միաբանած էին Յունաց եւ Հռովմայեցւոց եկեղեցիները: Այնուհետեւ առանձին բանակցութիւններ տեղի ունեցան եօթը խորհրդոց եւ տիեզերական ժողովներու մասին: 1439, Նոյեմբեր 22ին կնքուեցաւ Հայոց եւ Հռովմայ եկեղեցիներու մէջ Միութիւնը: Հայոց կողմէն ստորագրեցին Միութեան թղթին Սարգիս եւ Թովմաս այսպէս.

«Արդ եւ Սարգիս վարդապետս որ եմ դեսպան Հայոց կաթողիկոսին եւ աթոռակալ Կաֆային. այս սահմանս գրեցաւ ձեռամբ իմով»:

«Ես Թովմայ վարդապետս վկայ'յ եմ. եւ դեսպան այս բանիս. ձեռամբ իմով գրեցի»<sup>8</sup>:

Եւզինիոս Գ. ուրախ բանակցութեանց այս յաջող ելքին վրայ, խօսեցաւ հայ պատգամաւորներու հետ Կաֆայի Հայոց, մասնաւորապէս հայ եւ լատին եկեղեցիներու յարաբերութեանց մասին. բառնալու համար ամէն տրտունջի առիթ, 1439 Դեկտ. 15ին գրեց առանձին կոնդակ մը, որով հրահանգներ կու տար լատինաձէսներուն համերաշխութեամբ ապրելու համար Հայոց հետ (անդ 145—146):

Քահանայապետը շնորհեց հայ պատգա-

<sup>8</sup> Պալճեան, 141:

մաւորներուն մեծագին ընծաներ եւ ճանապարհ հանեց զանոնք օրհնութեամբ:

3. Անոնք վերադարձան Կաֆա: Սարգիս վարդապետ առանձնացաւ կրկին իւր վանքը եւ շարունակեց մնալ աթոռակալ եւ երեսօխտան Սոյ կաթողիկոսին: 1447ին իրեն հանդիպեցաւ ի Կաֆա Մկրտիչ Նաղաշ Ամուլայ եպիսկոպոսը, որ 1438ին հակառակած էր Միութեան դադարաւորին: Իր կենսագրերը Աստուածատուր եպիսկոպոս Ուլսանացի այսպէս կը գրէ այս տեսակցութեան մասին<sup>9</sup>.

«Եւ ի Կաֆայն զնացեալ... եւ զհրաշալի չքնաղաղարդ գալատուական սուրբ Նշանն Գրիստոսի բերեալ ի Կաֆայէն, որ ունի մասն ի Սաչափայէն Գրիստոսի. եւ բուն սուրբ Նշանին ի լուսավայլ տկանց. եւ ի սիրտս խաչին զԳրիստոս բեւեռեալ յոսկւոյ ձուլածոյ: Եւ թէ ուստի՞ իցէ հրաշալիս այս սուրբ Նշանս պատուական. զսա պապն Հռոմայ պարգեւեաց մեծ վարդապետին Սարգիս Կաֆայեցոյն, յորժամ զնաց ի Հռոմ: Եւ ի զնալն Տէր Մկրտչին ի Կաֆայն՝ մեծ վարդապետն Սարգիս ընկալաւ մեծ պատուով. եւ ընդ բազում մեծարանացն եւ պատուոյն պարգեւեաց տէր Մկրտչին զսուրբ եւ զհրաշալի, գալատուական սուրբ Նշանն. զոր ընկալեալ մեծաւ ուրախութեամբ եւ բերեալ մեծ պարգեւօք տանս Հայոց՝ ի սեփական յաթոռն իւր ի յԱմիթ մայրաքաղաքն՝ ի սուրբ կաթողիկէն, զոր ինքն շինեալ էր. եւ հհաս յաւուր տօնի սուրբ Նշանին Վարդապայ»<sup>10</sup>:

Սարգիս վարդապետի հետքը կը կորսնց-

<sup>9</sup> Հայապատում, § 376 (էջ 574 մեծագիր):

<sup>10</sup> Չամչեան, Գ., 484 կը գրէ. Մկրտիչ Նաղաշ, Ամուլայ եպիսկոպոսը, Ս. Թէոդորոս նորակառոյց եկեղեցւոյ գմբէթին բուն կործանման պատճառաւ «ի սաստիկ արածութենէն ոչ կարացեալ կալ ի քաղաքին Ամուլայ, ... եւ զնաց ի կողմանս Պոնտոսի. եւ զտեսայ հանդիսս՝ զնաց ի Կ. Պոլիս (1443) եւ անտի չոքաւ յերկիրն Ղրիմու. եւ հասեալ ի քաղաքն Կաֆայ՝ հանդիպեցաւ... Սարգիս վարդապետի, ընդ որում եւ յառաջմէ ունէր բարեկամութիւն. եւ եղիտ պատիւ մեծ ի նմանէ: Եւ ի զազարիլ իբրում անդ զբազում ժամանակս՝ խօսեցաւ ընդ նմա յերկար Սարգիս վարդապետ ի վերայ զնալոյն իւրոյ յիտալիս. եւ իսկամուտ արարեալ զնա դաւանութեան եւ աւանդութեան եկեղեցւոյն Լատինացւոց եւ Յունաց՝ շինեաց զմիտս նորա եւ հաստատեաց յուղիղ կարծիս: Յարձարձիլ ապա սիրոյ ի մէջ երկուցոնց՝ եւ Մկրտիչ վարդապետ Սարգիս վարդապետի շուրջառս մեծագինս բազմախաչեան. եւ սա ի թողուլ ի Կաֆա զիշատակ իւր՝ յօրինեաց ձեռամբ իւրով զարդ ինչ եկեղեցական խաչաձեւ՝ նկարակերտեալ ըստ իբրում արուեստի:

Եւ Սարգիս վարդապետ բաց յայլոց իրաց եւ Մկրտչի գալատուական եւ զհրաշալի սուրբ Նշանն Սաչին՝ յորում էր մասն ի փայտէն կենաց, զոր պարգեւեալ էր նմա որբզան պապն Եւզինէնոս: Չամչեանի աղբիւրն առանց տարակուսի Մ. Նաղաշի կենսագրութիւնն է, որուն խօսքերը այսպէս ընդլայնած է:

նենք այս տեղ: Ինչպէս իր կեանքի առաւօտը մշուշապատ կը մնար մեզի, նոյնպէս երեկոյն կը մնայ արամուրով առիգածուած մեր տեսութենէն:

4. Դրսեցի էր անիկա. հաւանօրէն Կիլիկեցի, թերեւս ուղարկուած Սոյ կաթողիկոսարանէն իբրեւ կաթողիկոսական աթոռակալ ի Ղրիմ: Իր անձը ծանօթ էր Կոստանդին կաթողիկոսին. արժանացած էր անոր վստահութեան: Սարգիս վարդապետին ներկայութիւնն ի Կաֆա ամայացած Ս. Անտոն վանքին կենդանութիւն շնորհեց: Վարդապետի Դասարանէն ծլեցան ծաղկեցան ուսեալ եկեղեցականներ, քաջավարժ գրիչներ: Անիկա անցուց իր կեանքը Կաֆա եւ հաւանօրէն հոն ալ վախճանեցաւ: Աստուածատուր Ուլսանացի կ'անուանէ զանիկա Կաֆայեցի, անշուշտ բնակութենէն առեալ:

Սարգիս վարդապետի գրական գործունէութենէն նշմարներ չեն հասած մեզի: Երգ մը, որուն հեղինակը Սարգիս ինքզինքը «հիւսիսային հողմ» կ'անուանէ, կը ներշնչէ մեզի հաւատք, թէ Սարգիս վարդապետ ըլլայ անոր հեղինակը:

ԼԻՊՍՐԻՏԻ ԵՐԳԸ

«Հողովոյ սուրբ եւ ամբիծ» սկզբնաւորութեամբ երգը, նուիրուած Լիպարիտի յիշատակին, առաջին անգամ հրատարակ հանեց Հ. Ղ. Ալիշան, Յուլիկը հայրենեաց, Բ., 510—511: Այն ժամանակ կը վերագրէր զայն Հ. Ալիշան Յովհաննէս Թլիւրարացւոյ (էջ 510, ծան. 1): Իսկ Ս ի ս ու ա ն ի մ է ջ (227), ուր երկրորդ անգամ կը հրատարակէր տաղս, զայն «ռամկարան քերդողի» մը կ'ընծայէր, հեղինակը առանց յանուանէ անուանելու: Երրորդ անգամ լոյս ընծայելով Հ ա յ ա պ ա տ ու մ ի մ է ջ (541, ծ. 5) կը գրէր տաղիս ոճի մասին. «քան զԹլիւրարացւոյն (յորմէ առած է քանի մի բան), աւելի ռամկական է, այլ եւ աւելի զգայուն»: ուստի եւ հեղինակն ալ քան զԹլիւրարացին յետնագոյն ժամանակով:

Կ. Կոստանեան ուշադիր ըլլալով տաղին վերջնութեան, ուր կ'ըսուի.

«Հիւսիսային հողմըն հիմիկ Սարգիս յիշող եղաւ քերիկ»

կը գրէր թէ «վերջին տնից երեւում է, որ... հեղինակն է Սարգիս, որ թերեւս ունեցել է մականունն Հիմիկ»: Այս տողերուն քիչ յետոյ կ'աւելցնէ Կոստանեան. «Բայց եթէ 'Հի-

միկ, մականունն չէ, վերջին տան խօսքերից հետեւում է որ քաջ Լիպարտին ա յ ժ մ յիշող եղաւ Սարգիսը, որ իրեն 'հիւսիսային հողմ, համարում է» (Կոստ., Յովհ. Թլիւրարացի, էջ 58): Այս մեկնութեամբ, որ անշուշտ ընդունելի է, Հ. Ալիշանի բացատրութիւնը, թէ «յիշեցնէ Ս. Սարգիսի համար երգուած շարականը. Աւետաւոր Հայոց մեծաց դիմեալ ի մէջ երկրի ի հիւսիսոյ՝ հողմն հարաւոյ ի դաշտ ծաղկածին, երազահաս սուրբը Սարգիս» (Յուլիկը, Բ., 511, ծ. 1, Հայապատում, 541, ծ. 6) կը կորսնցնէ իր ոյժը:

«Հողմն հիւսիսային» բանաստեղծօրէն արտայայտուած՝ հոմանիշ է անշուշտ «հիւսիսային կողմեցի» ասութեան: Իսկ «հիւսիսային կողմանք» ըսելով նախնիք կ'իմանային Ղրիմ թերակղզին. հմմտ. «յաշխարհս հիւսիսոյ որ կողի Սրիմ» (1346). «յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսային կողմանցս» այն է Սրիմ դաւառին (1346). «յեպիսկոպոսութեան այսմ նահանգի հիւսիսական կողմանցս» (1350), «ի հիւսիսային կողմանս Սրիմի» (1352) եւն:

Ուստի հեղինակն Սարգիս ըլլալով բնակիչ «հիւսիսային կողմանց», յիշած է Լիպարիտ եւ անոր քաջագործութիւնները եւ երգած անոր յիշատակը: «Հիմիկ», այժմ յիշող եղած է Սարգիս իւր հայրենեաց դիւցազնին, այժմ երբ կը գտնուի ի կողմանս հիւսիսոյ, ինչպէս «հիւսիսային հողմ» եւ վերջիշած է անոր դիւցազնական շահատակութիւնները, որոնք պահպանած էին հայրենեաց սահմանները, ահարեկած թշնամիները. յիշած է Լիպարտի անձը, որուն վրայ, ինչպէս սիւնի վրայ յեցած էին անոր կենդանութեան հայ աշխարհը, հայ սրտերը:

Եթէ Կիլիկեցի է երգիչը, Սարգիս անունով, եւ կը բնակի ի կողմանս հիւսիսոյ ի Ղրիմ-Կաֆա, համանուն Սարգիսներէն ո՞վ աւելի, իրաւունք եւ պատշաճութիւն ունի գողտրիկ տաղիս հեղինակն ըլլալու քան Սարգիս վարդապետ Կաֆայի:

Սարգիս ժամանակակից մը չէր Լիպարիտի. բայց հնչած են իր ականջին ալ այն գրաւոր եւ անգիր պատմութեանքները, որոնք շրջան ըրած են Կիլիկիա եւ «յամէն երկիր»: Լիպարիտի յիշատակը դեռ թարմ է, անոր արեան «կարմիր գոյնը» դեռ կենդանի, քաջութիւնները անմոռաց, բնաւորութեան բարութիւնը եւ խօսքին քաղցրութիւնը տողորուած յիշողութիւններու մէջ: Սարգիս վարդապետ իւր հայրիկէն եւ պապիկէն ալ կարող էր կեն-

դանի բարբառով լսած ըլլալ «Սըսայ երկրիս» «լուսատու աստղին» եւ քաջ «պահպանի» մասին: Հաւանորէն երգած է 1438ին եւ իբրեւ նուէր ուղարկած Կոստանդին կաթողիկոսին:

ԲՆԱԳԻՐԸ

Տաղիս ձեռագիրը, ուսկից առած է Հ. Ա. լիւ- շան, անծանօթ է ինձ: Ձեռագրաց մէջ եր- կրորդ օրինակի պատահած չեմ:

Հրատարակուած է չորս անգամ. հին- գերորդը պիտի ըլլայ մեր հրատարակութիւնը:

Առաջին անգամ լոյս տեսաւ Բ ա ղ մ ա- վ է պ, 1863, էջ 376. ասկէ արատապուած Յուշիկը, Բ., 510—511 = A:

Երկրորդ անգամ՝ Ս ի ս ու ա ն, էջ 226. հոս դուրս ձգուած են Գ. Գ. եւ Չ. տուները. իսկ «Թուրք» անունը շրջուած է «Ուրթը» = S:

Երրորդ անգամ՝ Կ. Կոստանեանց, Յովհ. Թիւրքանցի եւ իւր տաղերը. Թիֆլիս 1892, էջ 57—59 (Յուշիկէն):

Չորրորդ անգամ՝ Հ ա յ ա պ ա տ ու լ մ, էջ 541 (մեծագիր) Յուշիկէն = H:

ՏԱՂ Ի ՔԱՋՆ ԼԻՊԱՐԻՏ

Հողովորդ սուրբ ես եւ ամբիծ, Ձքեղ էր ընտրեալ Տէրն ի յերկնից. Պարծանք եղեր քրիստոնէից, Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Անձամբը քաջ Սամփոտն էիր, Յորժամ ճօշանը հազնէիր, Թուրքն ի յահէդ դառնայր մոխիր. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Արեգական նըման պայծառ, Երեսը լոյս էր կամար. Բարձրը բարի, խօսքը շաքար. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Բնութեամբ բարի դէմ աղքատաց, Լըսող էիր վարդապետաց, Քո բանդ յամէն երկիր գոված. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Ձանձնը արէիր վասն օրինաց, Մէն կանգնելով հազրի դիմաց, Քու սուրբը շատ սրտեր իբաց. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Խորագիր չունի Ձեռագիրը: 2 A տէր: — 7 A դառնար: — 11 H խրատը: — 15 A ամէն: — 19 Բուր տպագիրը «արտեր». պէտք է կարգալ «սրբատեր». տպագիրը «երաց». բայց H կը յայտնէ թէ «ի բաց» ունի Ձեռագիրը, կարգալ «իբաց»:

Դու հազարաց դէմ պահպան, Մարդ չէ տեսեր քեզիկ նըման. Այս հողածինքս որ յերկրի կան. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Սըսայ երկրիս աստղ լուսատու, Կանգնող էիր յամէն ժամու. Թուրքն ի յահէդ սարսէր մահու. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Այն չար պահիկն որ քեզ հասաւ, Քեզի օգնող չըկայր բընաւ. Անձնը կարմիր գոյն ներկեցաւ. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Ձայն չարաչար մահն որ տեսար, Կրակի՛ծ է մօրն որ դուն ծընար. Աւա՛ղ ըզքեզ բերան հազար. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Սըսայ երկրին պաղչա ու ծառ, Գոյնք ի դունաց ծաղկունք որ կայր, Հառաչանօք առին զիրար. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Կաթողիկոս եւ վարդապետ, Սուրբ քահանայք ամէնն ի հետ. Շատ արտասուօք սրտերն երեւ. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Հիւսիսային հողմըն հիմիկ, Մարդիս յիշող եղաւ քեզիկ. Դուն սիւն էիր Հայոց մեզիկ. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՀԱՅԵՐԸ ՄԵՐԳԵԹՈՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԷ

5. ՀԱՅՈՅ ՔԹԻՆ ՅԱՏԱՆԻՇԸ

Դէմքի մարդախօսական կարեւոր անդամ- ներէն է քիթը. անոր համեմատութիւնը հաս- տատուն տուեալներ կ'ընձեռէ մեզի, որոնք ժառանգական բնոյթն ունին ինչպէս մազ եւ աչք: Քիթին վրայ չորս կէտ կարելի է նկա- տել՝ 1. երկայնութիւնը, 2. լայնութիւնը, 3. արմատը եւ 4. քամակը: Առաջին եր-

41 SK կաթողիկոսը: 48 AH ունին հոս իբրեւ երգին շարունակութիւն «Է Աստուծոյ անուն օրհնած» տաղին Ա.—Դ. տուները:

կուքը, որոնք չափական մեթոդով կը ստա- ցուին, կու տան քիթանիշը. մինչ երկու վեր- ջինները դուռ գննական են: Քիթի չափերը, լաւագոյն՝ ցուցիչները անհատական շատ մեծ փոփոխութեան ենթակայ են. թէեւ շօշափելի իրողութիւններ եւ շատ ամուր կուտաններ կու տան մեզի ժողովուրդներու դասաւորման համար, միայն թէ հոս առաւելագոյն շե- տուած է մեծագոյն քանակութեամբ ուսում- նասիրութիւններ ընելու հարկը: Հնդիկ ժո- դովուրդի օրինակը բաւական է ապահովելու գմեղ այս տեսակէտէ. Հոլանդի<sup>1</sup> կազմած տախտակին համաձայն՝ Հնդկաստանի երեք ժողովուրդները՝ Բէհարբահման, Գոալա եւ Խամար, որոնք դասակարգային արգելքին պատճառաւ դարեր շարունակ կղզիացած ու անհաղորդ մնացած են իրարմէ, քիթանիշի բո- լորովին տարբեր յաճախութիւն կը ցուցնեն. մինչ առաջինը իւր բարձրակէտն ունի իբր 67°50 (քիթանիշ), եկրորդը կ'ունենայ 77°50, եւ երրորդը՝ 87°50: Քիթի ցուցիչը սակայն ամէն տարիքի մէջ նոյն չի մնար. մանուկնե- րու քով քիթի երկայնութիւնը լիովին աճած չըլլալով ցուցիչը միշտ բարձր թիւ մըն է, որ սափակ քիթ կը նշանակէ: Քիթի ցուցիչները որոշ աշխարհագրական բաժանում մը կը ցուցնեն. Եւրոպայի, Կովկասի եւ քանի մը հնդկական տիպերու քով երեւան կու գայ նրբաքիթը. մինչ միջաքիթը կը գտնուի գլխա- ւորաբար Կենդրոնական Ասիա, Հնդկաստան, հիւսիսային Ափրիկէ եւ Ամերիկա. տափակ քիթը յատուկ է արեւելեան ասիացիներուն եւ դրացի կղզեբնակներուն, ինչպէս նաեւ օտրի- կեցի խափշիկներուն:

Հայերը իրենց տիպին առանձնայատուկ շեշտեալ քիթ մը կը ներկայացնեն. անոնք ա- ուաւելագոյն նրբաքիթ են. քիթի երկայնութեան համեմատութեամբ քիթի թեւերուն անջրպետը շատ փոքր է: Պանդիւխով (յիշած Մարտին<sup>2</sup>) կը դնէ 60°4. այս նուրբ քիթը Հայոց քով ոչ նուազ քան 94% յաճախութիւն ունի (Քուր- տերու քով 95%): Շանտր<sup>3</sup>, զոր կը նախըն- տրենք յիշել իւր մանրամասնութեան համար, 64°8 կը նշանակէ 341 հայերու իբր քիթանիշ միջին արժէքը, որուն կը համապատասխանէ 54 հզրդմ. բարձրութիւն, 35 հզրդմ. տրա- մագծով: Վերը նկատեցինք թէ քիթանիշն ան- հատական շատ լայնածաւալ փոփոխութեան

ենթակայ է. այդ պատճառաւ քիթանիշի միջին արժէքը չի պատկերացներ անոր իրական յա- ճախութիւնը. մանաւանդ որ Հայոց քով դա- ւառական տիպերու անհամեմատ գերակշռու- թիւն կը տիրէ, այսպէս Նախիջևան քիթանիշն է հազիւ 58°61 (սաստիկ նուրբ), մինչ Շուշի 70°37 (միջաքիթ)<sup>4</sup>: Ամէնէն յաճախագէտն է 63°00—66°00, առաջինը՝ մասնաւորապէս Դիլ, Տաթեւ, Իգդիր, եւ երկրորդը՝ Ղիրուսի, Գարաքիլիսա, Թիֆլիս: Կանանց քով, որոնք միշտ տարբերութիւն մը կը ցուցնեն, քիթ- անիշն է 65°30, համապատասխան 55 մմ. բարձ- րութեամբ եւ 32 մմ. լայնութեամբ: Ամբողջն 4 հետեւեալ հարիւրական համեմատութիւնը կը ներկայացնէ՝ 341 հոգիէն 58=17% անդրնրբա- քիթ, 176=52% նրբաքիթ (որ կը խաղայ 60°00—69°90ի մէջ, գլխաւոր վայր՝ Երեւան, Ադուլիս, Թիֆլիս), 94=27% միջաքիթ, եւ 13=4% տափակ քիթ: Նրբաքիթի թուական ստակութիւնը ցայտուն է:

Վրացի մարդախօսը՝ Պրոֆ. Ջաւախիշ- վիլի աւելի փոքր քիթանիշ մը կը գտնէ 721 ան- հատներու համար, որ կը ցուցնէ թէ Հայերն ստուար մեծամասնութեամբ նրբաքիթ են: Ահաւասիկ համեմատութիւնը. 78% նրբա- քիթ, 20% միջաքիթ, 2% տափակքիթ, միջին արժէք 62°60<sup>5</sup>: Նոյնը կը հաստատեն Փր. Բոասի տուեալները, որ 75 ասիածին այրերու քիթ բարձրութիւն կը նշանակէ 56°4 մմ., լայ- նութիւն 37°2 մմ., առաջինին 4°9 մմ., եր- կրորդին 2°9 մմ. խաղացման անջրպետով բարձրութեանէն եւ լայնութեանէն իբր ցուցիչ կը ստանանք 67°00. ամերիկացիներու համար 63°74<sup>6</sup>: Հայ կանանց քիթանիշը կը գտնենք 64°29, համապատասխան 52°1 մմ. բարձրու- թեամբ, 33°5 մմ. լայնութեամբ (ամերիկացիներն հայուհիներուն քիթանիշ՝ 62°80): Մեր հա- չիւնները կը ցուցնեն 63°38 իբր քիթանիշի միջին արժէք, 60 մմ. բարձրութեամբ, 37 մմ. լայ- նութեամբ: Պոն էրքէրտի չափերուն համա- ձայն կովկասցի 21 հայերու քիթանիշն է 64°61<sup>7</sup>: Ռուսմանահայերու վրայ կատարած է. Պի- տարի<sup>8</sup> չափերը կու տան իբր քիթանիշ 66°06, որուն հարիւրական բաժանումն է՝ 69 հոգի = 55% նրբաքիթ, 56 հոգի = 45% միջաքիթ, կը բացակայ տափակ քիթը: Հետեւեալ հա-

<sup>4</sup> Recherches, p. 42—43. <sup>5</sup> Arch. f. Anthr., 1925, S. 86—87. <sup>6</sup> Zeitschr. f. Ethn., 1924, S. 77—79. <sup>7</sup> Erckert, Arch. f. Anthr., 1891, S. 243. <sup>8</sup> Bull. soc. scien. Roum., 1912, p. 364.

<sup>1</sup> Martin, Lehrbuch, S. 453. <sup>2</sup> Martin, Lehrbuch, S. 447, 449. <sup>3</sup> Recherches, p. 41.